ԼԻ ՍԻՆ
ՀԱՅԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎՐԱՍԻԱՅՈՒՄ

Որպես 1980-ականներից սկսված տնտեսական տպավորիչ աճի և հարակից այլ գործոնների բնականոն հետևանք 1993թ-ից Չինաստանի տնտեսությունում առաջացավ որակապես նոր իրավիճակ, ինչն արտահայտվեց երկրում առաջնային էներգիայի արտադրության և պահանջարկի միջև հարաճուն բացասական հաշվեկշռի անշրջելի առկայությամբ:

ՉԺՀ ՀՆԱ-ն 2000-2020թթ. ընթացքում քառապատկելու ռազմավարական նպատակը երկրի էներգետիկ անվտանգության խնդիրը դարձնում է հիմնային առաջնահերթություն: 2000-2007թթ. ՉԺՀ ՀՆԱ միջին տարեկան աճը կազմել է մոտ 9.8%: Համաձայն ՉԺՀ ԳԱ փորձագիտական կանխատեսումների Չինաստանի տնտեսությունը կպահպանի տարեկան առնվազն 8% աճի տեմպը մինչև 2015թ-ը, որից հետո այն կարող է համեմատաբար նվազել մինչև 6.5% [1]: Ըստ էներգիայի միջազգային վարչության հետազոտությունների[2], ՉԺՀ տնտեսական զարգացման ներկայիս տեմպի պահպանման դեպքում, երկրի էներգետիկ պահանջների տարեկան միջին աճը 1990-2030 թթ. հատվածում կկազմի 3.4% և արդեն իսկ 2020թ.-ին, ՉԺՀ էներգիայի պահանջարկը կգերազանցի ԱՄՆ-ի առաջնային էներգիայի ծախսը: Ներկայումս ՉԺՀ էներգետիկ պահանջների տարեկան աճը շուրջ 3 անգամ գերազանցում է համաշխարհային միջին ցուցանիշը[3] :

Երկրի տնտեսական բարեփոխումները, առաջին հերթին ներքին ռեսուրսների միջոցով ապահովելու ռազմավարությունը, ի սկզբանե եղել և մնում է հիմնարար նշանակության մոտեցում Չինաստանի համար: Չնայած վերոշարադրյալի, երկրի էներգետիկ պահանջները ներկայումս նույնպես հիմնականում ապահովվում են ներքին միջոցներով (մոտ 94%-2006թ.): Չնայած նրան, որ նախատեսվում է այն նվազեցնել՝ 2020թ-ին հասցնելով 80%-ի, այնուամենայնիվ, նույնիսկ այդ դեպքում, Չինաստանն ունենալու է աշխարհում ամենաբարձր ցուցանիշներից մեկը [1]:

Առաջնային էներգիայի արտադրության կառուցվածքում հիմնական բաղադրիչը ածուխն է (2005թ-69.9%), որը լիովին արտադրվում է Չինաստանում: ՉԺՀ ածխի ուսումնասիրված պաշարները մեծությամբ երրորդն են աշխարհում, զիջելով միայն ԱՄՆ-ին և ՈԴ-ին, և կազմում են շուրջ 114.5 մլրդ.

տոննա[2]: Ածխի օգտագործման մասնաբաժինն էներգարտադրությունում նվազելով 2020թ-ին կկազմի 55%, իսկ 2050թ-ին 40%, իսկ նավթի մասնաբաժինը եղել է և կմնա իր նշանակությամբ երկրորդը ՉԺՀ էներգետիկ պահանջարկում 21.1% - 2005թ-ին., 22% - 2020թ-ին. և 23% - 2050թ-ին [1]:

1993թ.-ը շրջադարձային էր նախ և առաջ նրանով, որ էներգետիկ բացասական հաշվեկշռի ձևավորման հիմքը երկրի նավթի պահանջարկն էր: Առաջին անգամ Չինաստանում նավթի օգտագործման պահանջարկը 1.2%-ով գերազանցեց արդյունահանվող նավթի ծավալը, ինչով ՉԺՀ-ն նավթ արտահանող (net) երկրից դարձավ (net) նավթ ներմուծող: Հետագա տարիներին նավթի ներմուծման պահանջարկի աճի արագությունը հանգեցրեց Չինաստանի նավթի ներքին պահանջարկի բավարարման հիմնարար կախվածությանը արտաքին ներկրումներից: 1985-1995թթ. Չինաստանի նավթի պահանջարկը կրկնապատկվեց 1.7-ից 3.4 միլ. բար./օր: Այն նորից կրկնապատկվեց 2005-ին, կազմելով 6.8 միլ. բար./օր[4]: 2015թ. Չինաստանը կարող է օգտագործել աշխարհում արդյունահանվող նավթի 14%-ը (9.4 միլ. բար./օր) ներմուծումից շուրջ 60-70 տոկոս կախվածությամբ: [2]*: Ընդ որում, 2006թ տվյալներով, Չինաստանում հետագոտված նավթի պաշարները կազմում են ընդամենը 16 մլրդ. բարել համաշխարհային ծավալների շուրջ 1.4%-ը:

Աշխարհում ներկայումս գործող չափանիշներով, որևէ երկրի ազգային տնտեսությունն իր վրա կրում է նավթի համաշխարհային շուկայի ուղղակի ազդեցությունը, երբ ներմուծման տարեկան ծավալը հատում է 50 մլն. բարելի սահմանը[9]: Այս իմաստով բնութագրիչ օրինակ է Իրաքյան պատերազմի ուղղակի հետևանքը Չինաստանի տնտեսության վրա: 2003թ. առաջին կեսին ՉԺՀ նավթի ներմուծումն աճել է 42.9%- ով, իսկ վճարը 110.6%, կազմելով 4 մլրդ ԱՄՆ դոլար հավելյալ ծախս: 2007թ. ՉԺՀ-ն ներմուծել է տվյալ չափանիշից բազմապատիկ անգամ ավելի 160 մլն. տ նավթ, ինչը 2006թ. համեմատ աճել է 12,4%-ով[4]: Ներկայումս, երբ Չինաստանը դարձել է Ասիայում նավթի ամենամեծ պահանջարկն ունեցող և աշխարհում երկրորդ ներմուծող երկիրը, էներգակիրների անվտանգությունը բնականորեն վերածվում է ՉԺՀ դիվանագիտական և պաշտպանական վերափոխումների հիմնական շարժիչ ուժի:

Ելնելով շրջակա միջավայրի պահպանության առումով առկա լրջագույն խնդիրների մեղմացման նկատառումներից՝ նախատեսվում է էներգարտադրության կառուցվածքում էապես ավելացնել վերականգնվող էներգառեսուրսների, ինչպես նաև բնական գազի օգտագործման ծավալները: Սկսած

*Համեմատության համար նշենք, որ ներկայումս ԱՄՆ-ը օգտագործում է մոտ 21 միլ. բար./օր, որը կազմում է համաշխարհային արտադրության շուրջ 25%. ԱՄՆ-ի էներգիայի պահանջարկի 40%-ը և ավելի քան 3 անգամ գերազանցում է ՉԺՀ օգտագործման ծավալը [2]:

2000թ.-ից գազի օգտագործման տարեկան աճն արտահայտվում է երկնիշ թվերով (2000թ. օգտագործվել է 23.8 մլրդ. մ/խ, իսկ 2006թ.-ին 55.6 մլրդ. մ/խ բնական գազ): 2005թ.-ին էներգոարտադրության կառուցվածքում բնական գազի մասնաբաժինը կազմել է 2.7%: Նախատեսվում է 2020թ.-ին այն հասցնել 8%-ի, իսկ 2050թ.-ին 12%-ի: Մինչև 2007թ. Չինաստանն ինքնապահովված էր բնական գազով: 2010 թ.-ին արդեն իսկ անհրաժեշտ կլինի ներմուծել շուրջ 40 մլրդ. մ/խ, իսկ 2020-ին 80 մլրդ. մ/խ բնական գազ, ինչը համապատասխանաբար կկազմի օգտագործվելիք ընդհանուր ծավալների 34% և 40%-ը: Ընդ որում, 2006թ. տվյալներով, երկրում հետազոտված բնական գազի պաշարները կազմում են ընդամենը 2.5 տրիլիոն մ/խ (համաշխարհային պաշարների 1.3%-ը և 12-րդ-ը աշխարհում [2,4]:

Ակնհայտ է, որ արտաքին վերահսկողության տակ գտնվող միջոցներից նման կախվածությունը ենթադրում է, որ երկրի տնտեսությունը համապատասխան էներգառեսուրսներով ապահովելուն ուղղված ՉԺՀ ջանքերը կարևորագույն նշանակություն ունեն առաջին հերթին ազգային անվտանգության առումով: Խնդրի խորությունն ըմբռնելու համար պետք է նշել, որ էներգոապահովման հարցում Չինաստանը կանգնած է և ներքին, և արտաքին խնդիրների դիմակայման անհրաժեշտության առջև: Ներքին իմաստով, դա տնտեսական արագընթաց աճով, ինչպես նաև դրա հետևանք հանդիսացող սոցիալական զարգացմամբ պայմանավորված էներգաօգտագործման պահանջարկի բնականոն աճի բավարարման և շրջակա միջավայրի խորացող հիմնախնդիրների լուծումն է: Արտաքին առումով, հիմնական մարտահրավերները նախ և առաջ պայմանավորված են, ներկա միջազգային իրադրության փոփոխականությամբ, ինչպես նաև էներգառեսուրսներով հարուստ շրջանների համեմատական բարձր անկայունությամբ:

Էներգիան հիմնային և առաջնային նշանակություն ունի աշխարհի ամենամեծ բնակչությունն ունեցող Չինաստանի էկոնոմիկական առաջընթացի, սոցիալական կայունության և երկրի ազգային անվտանգության առումով: Արտաքին վերահսկողության տակ գտնվող էներգառեսուրսների ներմուծումից խորացող կախվածությունն ուղղակիորեն առնչվում է երկրի ազգային անվտանգությանը և ենթադրում է Չինաստանի կողմից համարժեք ներգրավվածության դրսևորում:

<u>ՉԺՀ էներգետիկ քաղաքականությունը և բարեփոխումները-</u> ՉԺՀ հիմնադրումից հետո էներգետիկ ոլորտի կառավարումն իրականացնող բազմաթիվ պետական հաստատություններ են հիմնադրվել և կազմալուծվել: 1993թ. համընկավ ՉԺՀ էներգետիկայի նախարարության կազմալուծման հետ: Նավթի և գազի ոլորտին առընչվող ներքին և արտաքին գործընթացներում գերակա և որոշիչ դերն ընծեռնվեց պետական երեք կորպորացիաներին CNPC-(China National Petroleum Corporation), Sinopec (China National

Petroleum and Chemical Corporation), և CNOOC-(China National Offshore Oil Corporation): Էներգետիկ անվտանգությունը Չինաստանի համար, առաջին հերթին, նշանակում է ներքին ռեսուրսների զարգացման առաջնայնություն: Բայց, նավթի ներկրումների աճող անհրաժեշտության թելադրանքով, արդեն իսկ 1999թ. ՉԺՀ ԿԿ-ն հայտարարեց "գնալ դուրս"-(zou chu qu) ռազմավարություն, որն իր մեջ ներառում էր ձեռնարկությունների կողմից արտերկրում ներդրումների խրախուսում, ինչպես նաև կառավարման համակարգի և ֆինանսական ռեժիմի ազատականացում[5]: Նման մեխանիզմների ներմուծումը և կորպորացիաների ընդգրկումը Հոնկոնգի և Նյու Յորքի արժեթղթերի շուկա, հնարավորություն ընձեռնեց վարել բավականաչափ ակտիվ մրցակցային ներդումային քաղաքականություն արտերկրում:

Կորպորացիաների արտերկրյա գործունեությունը լիովին հենվում է շուկայական մեխանիզմների կիրառման, կամ, որ նույնն է, լիբերալ քաղաքականության կենսագործման վրա: Սկզբունքորեն այն համահունչ է ՉԺՀ նավթային քաղաքականությունում, նավթ-քաղաքականություն - Մեծ խաղ ավանդույթի վերածված բանաձևի կիրառումը բացառելու Չինաստանի դիրքորոշմանը: Ընդգծենք, որ տվյալ մոտեցումը ոչ մի դեպքում չի նշանակում էներգակիրների կամ նավթային դիվանագիտության իրականացման բացառում: Ավելին, ՉԺՀ և այլ երկրների միջև էներգետիկ համագործակցության հաջողությունը հիմնվել է նախ և առաջ դիվանագիտական ջանքերի վրա:

Պետական օժանդակության և միջոցների առկայությունը կորպորացիաների բանակցային և գնային արտերկրյա գործառույթներում ընձեռնեցին լրացուցիչ ճկունություն ցուցաբերելու հնարավորություն: Կարճ ժամանակահատվածում նշանակալիորեն ընդլայնեց կորպորացիաների ներդրումների ծավալը և աշխարհագրությունը՝ որոշ դեպքերում ընդգրկելով նաև արևմտյան կորպորացիաների ազդեցության տակ գտնվող շրջանները: Ընդ որում, պետք է ի նկատի ունենալ, որ այս ընկերությունները և ընդհանրապես Չինաստանը, էներգակիրների արտաքին աղբյուրների որոնման թելադրանքի առջև կանգնեցին աշխարհում արդեն իսկ գործող և արևմտյան նավթային կորպորացիաների ազդեցության տակ գտնվող ձևավորված համակարգի առկայության պայմաններում: Մի տեսակ ծայրամասային իրավիճակում հայտնված չինական ձեռնարկությունների համար արտաքին շուկայում իրենց տեղը գտնելու հիմնական միջոցներից մեկը դարձավ գնային քաղաքականության ընդգծված կիրառումը: ՉԺՀ կորպորացիաների էներգետիկ ռազմավարության նկատմամբ արտաքին մոտեցումներում դրսևորվեց նկատելիորեն ուռճացված անհանգստություն, որ Չինաստանի էներգակիրների պահանջարկի ազդեցիկ աճը և վարվող առևտրական էներգետիկ քաղաքականությունը կարող են վտանգել համաշխարհային, և առանձնապես, ԱՄՆ էներգետիկ անվտանգությունը[7]: Իրականում, չնայած տպավորիչ առաջընթացին, չինական կորպորացիաների

նավթի արտերկրյա արդյունահանումը փոքր է աշխարհում վաճառվող նավթի 2%-ից[2]: Ընդ որում այն հիմնականում վաճառվում է դրսում, ինչը կորպորացիաների համար ապահովում է ավելի բարձր շահույթ: Ըստ տարբեր գնահատականների, Չինաստան ներկրվում է դրանց արդյունահանման ընդամենը 40-45% ը:

<u>ՉԺՀ էներգետիկ անվտանգության ռազմավարությունը</u>-Չինաստանի էներգետիկ անվտանգության ապահովման առկա մարտահրավերների դիմակայման և հիմնախնդիրների լուծման հիմքը աճող պահանջարկի վերահսկման և արդի իրավիճակին համահունչ պետական կառավարման օպտիմալ մեխանիզմների մշակումն ու ներդնումն է: 2003-2004 թթ. Առաջացած էներգետիկ անբավարարության կտրուկ աճի թելադրանքով (2004 թ. նավթի ներմուծման ծավալը 2002թ. համեմատ աճեց մոտ 67%-ով) ՉԺՀ կառավարությունը կազմակերպեց էներգիայի կառավարման Պետական Խումբ՝ Չինաստանի Վարչապետի ղեկավարությամբ[7]: Խմբի հիմնական խնդիրները ՉԺՀ էներգետիկ ռազմավարության, ոլորտի զարգացման և էներգաօգտագործման օպտիմալացման, երկրի էներգետիկ անվտանգության ապահովման և միջազգային համագործակցության քաղաքականության մշակումն էր: 2007թ. դեկտեմբերին Խմբի կողմից հրապարակվեց. ՉԺՀ էներգիայի սպիտակ թղթերե փաստաթուղթը և. ՉԺՀ էներգիայի օրենքիե նախագիծը, որը դրվել է համաժողովրդական քննարկման[6]: Օրենքը կգործի 2009թ.-ից: Ամենայն հավանականությամբ, կհիմնադրվի նախարարություն, որտեղ կկենտրոնացվի Չինաստանի էներգետիկ ոլորտի ամբողջական կառավարումը, ինչպես նաև ոլորտին առնչվող ներքին և արտաքին քաղաքականության մշակումն ու իրականացումը: Նման կենտրոնացված մարմնի ստեղծումն արդիական է և խիստ հրատապ, նախ և առաջ այն իմաստով, որ պետական մակարդակի ռազմավարական խնդիրները և երկրի անվտանգությանն առնչվող մարտահրավերների լուծման հարցերը լիովին կդառնան պետության քաղաքականության սուբյեկտ և չեն առնչվի, թեկուզ և պետական, կորպորացիաների շուկայական գործառույթներին: Արտաքին էներգակիրների Չինաստանի պահանջարկը խստորեն փոխկապակցված է էներգիայի ոլորտում ներքին քաղաքականության հետ: էներգետիկ անվտանգության ռազմավարությունը, նախ և առաջ, ներառում է. էներգիայի պահպանման և օգտագործման արդյունավետության բարձրացում*, էներգիայի ոլորտի կառուցվածքի և պահանջարկի օպտիմալացում,

---

* 2006թ. ՀՆԱ 10.000$ (համդրաելի գներով) համար ՉԺՀ-ում ծախսվում է 4.7 անգամ ավելի էներգիա քան ԱՄՆ-ում և 3.5 անգամ ավելի քան աշխարհում միջին ցուցանիշը: Նախատեսվել է 2010թ. այն նվազեցնել 20%-ով: էներգիայի արդյունավետության բարձրացման հարցը հիմնարար նշանակություն ունի և առանձնահատուկ ուշադրության առարկա է[4]:

շրջակա միջավայրի պահպանում և նոր ալտերնատիվ ու վերականգնվող էներգոռեսուրսների օգտագործում, նավթի ռազմավարական պահուստի ստեղծում:**

Էներգետիկ ռազմավարության արտաքին գործառույթը հիմնվում է միջազգային համագործակցության ամրապնդման և էներգառաքման աղբյուրների դիվերսիֆիկացիայի վրա:

Ներկայումս, նավթի շուրջ 44%-ը Չինաստան է ներմուծվում Մերձավոր Արևելքից, 32%-ը Աֆրիկայից, շուրջ 13%-ը Ռուսաստանից, 4%-ը Ղազախստանից և 7%-ը այլ երկրներից[4]: Ներմուծման ներկայիս աշխարհագրությունը հանգեցնում է այլ երկրների կողմից վերահսկվող նավուղիներով և Մալակկա նեղուցով անցնող, ՉԺՀ ներմուծվող նավթի ամբողջ ծավալի շուրջ 80%-ի խոցելիությանը, ինչով նավթառաքման անվտանգությունը դառնում է առաջնահերթ խնդիր[9]: Ավելին, ծովային ուղիներով ներկրման շուրջ 90%-ը իրականացվում է այլ երկրների տանկերային նավատորմի միջոցով: 2003թ. Իրաքյան պատերազմն էական ազդեցություն ունեցավ Չինաստանի նավթային անվտանգության առկա և հնարավոր մարտահրավերների, վարվող էներգետիկ արտաքին քաղաքականության աշխարհագրության և առաքումների թերությունների բացահայտման առումով: Մերձավոր Արևելքում և Պարսկական ծոցում ուժային հաշվեկշռի առաջացած որակական փոփոխությունները և անկայունության գործոնների հնարավոր հետագա աճը, Չինաստանում առաջացրեցին նախազգուշական ռազմավարության ընդունման և կիրառման անհրաժեշտություն: Բնականորեն, այն հանգեց էներգառաքման աղբյուրների դիվերսիֆիկացիայի շնորհիվ Մերձավորարևելյան շրջանից ներմուծման ծավալների և Չինաստանի կողմից անվերահսկելի նավուղիներով առաքումների ծավալների հնարավոր նվազեցման առաջնահերթության գիտակցմանը:

Վերոշարադրյալի իմաստով, Միջին Ասիայից և ՈԴ-ից էներգակիրների խողովակաշարային տեղափոխումը Չինաստանի համար ակնհայտորեն ունի կենսական անհրաժեշտության նշանակություն: Ընդ որում, Կասպյան շրջանում և Ռուսաստանի հետ Չինաստանի էներգետիկ համագործակցության զարգացումներն ունեն որոշակիորեն միմյանցից տարբերվող առանձնահատկություններ ու ներքին տրամաբանություն [8]:

<u>Կասպյան էներգակիրների նշանակությունը և առկա հրավիճակը</u>-70–ական թթ.կատարված հետազոտությունների արդյունքների զերուռճացված ներկայացմամբ 1990-ականների սկզբում հաջողվեց ձևավորել հիպեր-վստահության

** 2005թ. ՉԺՀ-ն ուներ ընդամենը 30 օրվա պահուստ, այն դեպքում, երբ օրինակ ԱՄՆ, Ճապոնիան, Գերմանիան և Ֆրանսիա նավթի ռազմավարական պահուստը կբավարարի համապատասխանաբար 158, 169, 127 և 96 օրվա համար: ՉԺՀ-ն որոշել է ստեղծել 4 նոր պահուստարաններ, որոնք ի վերջո կբավարարեն Չինաստանի 90 օրյա պահանջները: 2007թ[4]:.

մթնոլորտ առ այն, որ Կասպյան ավազանն էներգակիրների իր պաշարներով կարող է դառնալ Մերձավորարևելյան շրջանի մրցակից և իր նշանակությամբ անգամ փոխարինել նրան: 1994թ.-ի սկզբին Ադրբեջանի և Անգլիայի Բրիտիշ Պետրոլիում (BP) կորպորացիայի միջև ստորագրված, այսպես կոչված, .դարի պայմանագրով սկզբնավորվեց Կասպյան ավազանում աշխարհաքաղաքական մրցակցություն, ինչն հետագայում որակվեց որպես, Նոր Մեծ Խաղ: Ի տարբերություն 20-րդ դարեսկզբի Նոր Մեծ Խաղե-ը նշանավորվում է, նախ և առաջ, ընդգրկված դերակատարների առատությամբ, էկոնոմիկայի գլոբալացման և էներգառեսուրսների հետագա հնարավոր անբավարարության անհանգստությամբ, ինչպես նաև ուժային կենտրոնների բոլորովին այլ որակներով: Տարածաշրջանի առաջնորդների կողմից հայտարարված բաց ներդրումային քաղաքականությունը Կասպյան ավազանն արևմտյան կորպորացիաների համար դարձրեց ավելի հրապուրիչ և դրանք արագորեն ակնհայտ գերակա դիրքեր նվաճեցին տարածաշրջանի էներգակիրների հատկապես նավթի մասնաբաժիններում: Հետագա ուսումնասիրությունները հերքեցին Կասպյան ավազանի նշանակությունը Մերձավորարևելյան շրջանին փոխարինելու իմաստով, միաժամանակ հիմնավորելով շրջանի կարևորագույն նշանակությունը էներգակիրների դիվերսիֆիկացիայի առումով, ինչը խիստ արդիական է էներգետիկ անվտանգության ապահովման նկատառումներով:*

Ծովային նավուղիներից հեռու գտնվող Կասպյան շրջանի ներկայիս հիմնական առանձնահատկությունը խողովակաշարային ուղղությունների, կամ որ նույնն է խողովակաշարային աշխարհաքաղաքական մրցակցությունն է, ինչն սկզբնավորվեց նավթատարների ուղղության հիմնախնդիրներով (Բաքու-Թբիլիսի-Ջեհյան-(ԲԹՋ)) և դարձավ էլ ավելի դրամատիկ գազախողովակների առումով: Էներգակիրների պաշարների և արդյունահանման սահմանափակումները, դրանց տեղափոխմամբ շահագրգիռ արտաքին դերակատարների առատությունը, ինչպես նաև առաքումների դիվերսիֆիկացման Կասպյան երկրների հետաքրքրությունը, առաջացրել են մրցակցային ավելորդ լարվածություն, որն առանձնահատուկ սրությամբ դրսևորվում է Ռուսաստանի և արևմտյան ծրագրերի իրականացման առումով: Ներկայումս ՈԴ էներգառտահանման ավելի քան 15% -ը կազմում են Կասպյան երկրներից տարանցվող էներգակիրները, այդ թվում Ղազախստանից արտահանվող ամբողջ նավթի 84%-ը և Թուրքմենիայից արտահանվող գազի 75%-ը[12]: Կասպյան էներգակիրները և դրանց առաքումների վերահսկողությունը ռազմավարական նշանակություն ունեն Ռուսաստանի ներկայիս էներգետիկ աշխարհաքաղա-

*Տարածաշրջանում հաստատված նավթի պաշարները կազմում են համաշխարհային պաշարների ավելի քան 4% -ը (Ադրբեջան-0.6%, Ղազախստան-3.3%, Թուրքմենստան և Ուզբեկստան- 0.06%): Բնական գազի պաշարները կազմում են ավելի քան 5%-ը (Ադրբեջան -0.8%, Ղազախստան-3.1%, Թուրքմենստան- 3% և Ուզբեկստան- 1%)[2]:

քանակությունում և ՈԴ-ն առավելագույն ջանքեր կգործադրի իր առավելությունների պահպանման առումով: ՈԴ-ի և Միջին Ասիայի երկրների միջև ծեռք բերված պայմանավորվածությունների իրականացման դեպքում, արդյունահանման ծավալների աճին զուգահեռ, տարանցվող էներգակիրների ներկայիս բացարձակ ծավալները կարող են եռապատկվել առկա խողովակաշարերի հզորության մեծացման և նորերի կառուցման (օրինակ ,Հարավային հոսքը) շնորհիվ: էներգակիրների համար եվրոպական գնային համակարգի կիրառման ՈԴ կողմից վերջին շրջանում առաջարկվող ճկուն քաղաքականությունը և Միջին Ասիայում նրա ունեցած աշխարհաքաղաքական ազդեցությունը նշանակալիորեն բարձրացնում են այդ պայմանավորվածությունների իրագործելիության հավանականությունը:

Արևմտյան խողովակաշարային ծրագրերի հիմնական առանձնահատկությունը (ԲԹՋ և Nabuco) դրանց տնտեսական ոչ լիարժեք հիմնավորումն է անգամ երթուղիների ընտրության առումով, ինչով դրանցում աշխարհաքաղաքական շեշտադրումները դառնում են առաջնային: Որպես աշխարհաքաղաքական մտահղացում, այդ ծրագրերը գործում են գաղափարի ծնման օրվանից անկախ նրանից դրանք կդառնան շոշափելի իրականություն (ԲԹՋ), թե այդպես էլ կմնան որպես գաղափար: Այդ ծրագրերի տնտեսական հիմնավորումը ենթադրում է նաև Հարավային Կովկասի և Միջինասիական էներգակիրների միահյուսվածությունն ու փոխշախկապվածությունը, ինչն աշխարհաքաղաքական կառուցվածքային տեղաշարժերի իմաստով հանգեցնում է այս երկու տարածաշրջանների որպես մեկ ամբողջական միավորի հանդես գալու հիմնադրույթին: Որպես հետևանք, առաջանում է տրանս-կասպյան խողովակաշարերի կառուցման անհրաժեշտություն, իսկ էներգոռեսուրսների սահմանափակության պատճառով նաև այլ՝ ոչ արևմտյան ուղղվածությամբ խողովակաշարային ծրագրերի իրագործումից դրանց կախվածություն: Ինչի հետևանքում, էապես նվազում է այս ծրագրերի իրագործելիության աստիճանը (Nabuco), կամ երկարատև շահագործելիության նպատակահարմարությունը:* Արևմտյան էներգետիկ ծրագրերում աշխարհաքաղաքական բաղադրիչների ակնհայտությունը Ռուսաստանի հետ մրցակցությունում մտցնում է հակադրման էլեմենտ, ինչի հետևանքով, էներգակիրների սահմանափակ քանակությունների այլ ուղղություններով տեղափոխման ծրագրերը որոշակիորեն ներդաշնակվում են արևմտյան ուղղության հետ ՈԴ մրցակցությանը: Այս իմաստով և այլ գործոնների զուգորդմամբ, ի տարբերություն արևմտյանի,

* Օրինակ, ԲԹՋ-նավթամուղի հետագա արդեունավետ շահագործումը 2011-ից Ադրբեջանում նավթի արդյունահանման նվազմանը զուգընթաց, ենթադրում է Ղազախստանի Կաշագան հանքավայրից զգալի նավթա-մատակարարում, որը դժվար է իրականացնել միայն տանկերներով:

Չինաստանի միջինասիական էներգոծրագրերի նկատմամբ Ռուսաստանը ցուցաբերում է որոշակի ընբռնողական և չհակադրվելու մոտեցում:

<u>ՁԺՀ էներգոծրագրերը և էներգոանվտանգության դիվանագիտությունը Կենտրոնական Եվրասիայում</u>- էներգակիրների արտադրության ավանդական կենտրոններից կախվածության բարձր աստիճանի առկայության և դրանց առաքման անվտանգության ապահովման վստահության բացակայության պայմաններում Կասպյան շրջանի, առավելապես միջինասիական էներգակիրների նշանակությունը Չինաստանի համար վերածվում է կենսականի: Կենտրոնական Ասիայի նկատմամբ Չինաստանի հետաքրքրությունն ունի աշխարհագրական բնականոնություն, իսկ տարածաշրջանի սահմանակից երկրների տնտեսական զարգացումն ու կայունության պահպանումը հիմնարար նշանակություն ունեն ՁԺՀ տնտեսական առաջընթացի ապահովման և անվտանգության ամրապնդման առումով: Շրջանի երկրների հետ կայուն, վստահելի և արդյունավետ համագործակցության ու բարեկամական հարաբերությունների ձևավորման առումով Չինաստանն իսկապես գործադրել է ամբողջական երկկողմ և բազմակողմ դիվանագիտական ջանքեր: Այդ համագործակցության առաջընթացին մեծապես նպաստում է նաև ՈԴ հետ բարեկամական և փոխվստահության հարաբերությունների ծավալումը և տարածաշրջանային համագործակցության ներդաշնակության ապահովման առումով գործադրվող ջանքերը:

էներգակիրների ոլորտում համագործակցության առաջին քննարկումներն սկսվել են 1993թ. Ղազախստանի հետ: Հետագայում չինական կորպորացիաները լուրջ ջանքեր գործադրեցին նաև մյուս երկրներում համագործակցության ծավալման առումով: Ադրբեջանում չինական կորպորացիաները մասնակցում են վեց ցամաքային նավթահանքավյրերի մշակմանը, որոնցում չինական կողմի նավթի մասնաբաժինների գումարային ծավալը կազմում է ընդամենը 87 մլն. տ [2]: Տվյալ քանակությունը կարող է բավարարել ՁԺՀ ներկայիս ներմուծման ընդամենը 6 ամսվա պահանջարկը: Չնայած չինական կորպորացիաների գործադրած համառ ջանքերին նրանց որևէ կերպ չհաջողվեց մասնակցել Ադրբեջանի խողովակաշարային ծրագրերին, ինչպես նաև ոչ ցամաքային հիմնական էներգոռեսուրսների մշակմանը:

Տարածաշրջանում Չինաստանի էներգոհամագործակցության հաջողությունը հենված է միջինասիական երկրների հետ համագործակցության առկա ձեռքբերումների վրա, որոնք հիմնականում հանդիսանում են գործադրված բարձր մակարդակի երկկողմ և բազմակողմ դիվանագիտական ջանքերի արդյունք: Ներկայումս միջինասիական երկրներում չինական կորպորացիաները մասնակցում են շուրջ 3 տասնյակի հասնող, այդ թվում նաև հանքավայրերի որոնման ծրագրերի: Կորպորացիաների ամենամեծ ներդրումներն անշուշտ իրականացվել են Ղազախստանում: CNPC-ի կողմից գործարկ-

վող ղազախական հանքավայրերից այդ թվում PetroKazakhstan-ի*, 2007թ. նավթի հանույթը կազմել է 18.6 մլն.տ, իսկ գազինը 4 մլրդ. մ.խ: Էներգոհամագործակցության ամենամեծ հաջողությունը Ղազախստան-Չինաստան նավթամուղի (ՂՉՆ) և Թուրքմենստան - Ուզբեկստան-Ղազախստան-Չինաստան գազամուղի (Տրանս-Ասիա Գազատար (ՏԱԳ)) կառուցումն է, որոնք գերակա նշանակություն ունեն ՉԺՀ էներգետիկ անվտանգության ապահովման ռազմավարությունում:

2008թ. սկսվեց Ղազախստան-Չինաստան նավթատարի երկրորդ փուլի շինարարության աշխատանքները, որն ընդգրկում է Կենկիյակ-Կումկոլ 700 կմ հատվածը, ինչով 2005թ. նոյեմբերին շահագործման հանձնված Ատասու-Ալաշանկոու նավթամուղը կմիանա Կասպից ծովի ղազախական հատվածի նավթահանքերով հարուստ շրջանին: ՂՉՆ-ը, 2011թ.-ին կունենա 3000կմ ընդհանուր երկարություն և տարեկան 20մլն. տ թողունակություն[10]:

ՏԱԳ-ը սկսվում է Ուզբեկստանին սահմանակից Թուրքմենստանի Գեդիան շրջանից, որտեղ CNPC-ն միանձնյա տնորինում է 1.3 տրիլ. խ.մ. պաշարով գազահանքի, անցնում է Ուզբեկստանով (525կմ) և Ղազախստանով (1293 կմ) ու հատում է ՉԺՀ սահմանը Սինձյան նահանգի Կոռգոսում: ՏԱԳ-ը զուգահեռ ընթացող երկգծյա խողովակաշար է, յուրաքանչյուրի 1067-մմ տրամագծով: Ըստ 2008թ. օգոստոսին վերանայված պայմանագրի գազատարով 30 մլրդ. խ.մ.-ի փոխարեն առաքվելու է 40 մլրդ. խ.մ. թուրքմենական գազ: Գազատարի շինարարության ընդհանուր ներդրումը կազմում է 7.31 մլրդ. դոլլար: Չինաստանի տարածքում ՏԱԳ-ը շարունակվելու է ավելի քան 7000 կմ: Աշխատանքները սկսվել են 2007թ. կեսերից և վերջնականապես պետք է ավարտվեն 2012թ.: Առաջին հերթի գազամատակարարումը 3-5 մլրդ. մ.խ կսկսվի 2009թ. դեկտեմբերից[11]: Քաղաքական-դիվանագիտական առումով ՏԱԳ-ի հիմնական առանձնահատկությունը 4 երկրների բարձրագույն ղեկավարների համատեղ ջանքերի կիրառումն է և հանդիսանում է բացառիկ ներդաշնակ և սերտ համագործակցության արդյունք: Երկու խողովակաշարերի անվտանգության ապահովման աստիճանը համադրելի է միջինասիական տարածաշրջանի կայունության ապահովման մակարդակին և առկա ու պոտենցիալ բոլոր մարտահրավերները (միջէթնիկական հնարավոր բախումներ, իսլամական էքստրեմիզմի, ահաբեկչության վտանգ և այլն) կարող են ունենալ իրենց որոշակի ազդեցությունն ու հետևանքները խողովակաշարերի անվտանգության առումով, ինչպես միջինասիական, այնպես էլ ՉԺՀ Սինձյանի ավտոնոմ շրջանում: Նահանգի բազմաէթնիկ կազմը և միջինասիական տարա-

---

*PetroKazakhstan-ը տարածաշրջանում CNPC-ի ամենամեծ նվաճումն է: Հիմնվել է 2005թ. հոկտեմբերին 4.18մլրդ. դոլլարով հաղթելով Լուկոյլի հետ Կումկոլի համար մրցույթում:

ծաշրջանի հետ նրանց մեծամասնության էթնոմշակութային և կրոնական ընդհանրությունները, ավելացնում են տարածաշրջանային չափահիշներով անկայունության հնարավոր դրսևորումների Միջին Ասիայից Սինձյան ներթափանցելու հնարավորությունները: Նահանգի ռազմավարական դիրքն ու նշանակությունը շրջանի տնտեսական զարգացումն ու կայունության ապահովումը դարձնում են կարևորագույն խնդիր ՉԺՀ կառավարության համար: Սինձյանի էներգետիկ ոլորտում կատարվող լայնածավալ ներդրումներն ու տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը կարող են էապես բարելավել նահանգում սոցիալ տնտեսական իրավիճակը: Այս իմաստով միջինասիական տարածաշրջանի անվտանգության և կայուն զարգացման խնդիրները առաջնահերթ և ռազմավարական նշանակություն ունեն Չինաստանի համար:

Տարածաշրջանի երկրների և ՈԳ հետ ներդաշնակ և կայուն համագործակցության իրականացման արդյունավետ մեխանիզմ է հանդիսանում Շանհայան Համագործակցության Կազմակերպությունը (ՇՀԿ): Էներգետիկ ոլորտում համագործակցության ամրապնդման և անվտանգության ապահովման խնդիրները ի սկզբանե առաջնային են կազմակերպության անդամ երկրների համար: Չնայած ՇՀԿ-ը ռազմական կազմակերպություն չէ և այդպիսին չի դառնա ապագայում, այնուամենայնիվ այն ունի անհրաժեշտ ներուժ քաղաքական և դիվանագիտական միջոցներով կանխելու տարածաշրջանում ուժային հաշվեկշռի հնարավոր փոփոխումը, ինչպես նաև հասնել անվտանգության ապահովման անհրաժեշտ մեխանիզմների մշակմանը: Տարածքային անվտանգության ապահովման ներկայումս գործող միակ ռազմական մեխանիզմը Հավաքական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպությունն (ՀԱՊԿ) է, ինչը կարող է ենթադրել նաև անկայունության լրջագույն վտանգների դեպքում, ՇՀԿ և ՀԱՊԿ համագործակցության ապահովման անհրաժեշտություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շարունակական տնտեսական տպավորիչ աճի բնականոն հետևանքով առաջացած էներգիայի հարաճուն պահանջարկի բավարարման խնդիրը հիմնարար առաջնահերթություն է Չինաստանի համար, և լուծումների առումով, ՉԺՀ կառավարությունն առաջին հերթին ընթանում է ներքին ռեսուրսների առավելագույն օգտագործման և ոլորտի կառավարման օպտիմալացման ուղիով: Նավթի և բնական գազի ներքին պաշարների սակավությունն ու պահանջարկի արագընթաց աճը հանգեցրել են արտաքին վերահսկողության տակ գտնվող էներգառեսուրսների ներմուծումից խորացող կախվածության, ինչն ուղղակիորեն առնչվում է ՉԺՀ ազգային անվտանգությանը և ենթադրում է Չինաստանի կողմից համարժեք ներգրավվածության դրսևորում: Ներմուծման ներկայիս աշխարհագրությունը հանգեցնում է այլ երկրների կողմից վերահսկվող նավուղիներով էներգակիրների գերակա մասի առաքմանը և

անվտանգության առումով դրանց խոցելիությանը: Հաշվի առնելով, որ մոտ ապագայում Չինաստանը չի կարող հասնել այդ նավուղիների անվտանգության ապահովման ընդունելի մակարդակի, ներմուծման աղբյուրների դիվերսիֆիկացման հարցը ՉԺՀ համար վերածվում է հիմնարար նշանակության առաջնահերթության, իսկ Կասպյան էներգակիրների խողովակաշարային տեղափոխումը կենսական նշանակության առաջնահերթության:

Կասպյան շրջանի էներգակիրների պաշարների և արդյունահանման սահմանափակումները, արևմտյան էներգետիկ ծրագրերում աշխարհաքաղաքական բաղադրիչների ակնհայտությունը առաջացրել են մրցակցային ավելորդ լարվածություն, որն առանձնահատուկ սրությամբ դրսևորվում է Ռուսաստանի և արևմտյան ծրագրերի իրականացման առումով, ինչի հետևանքով էներգակիրների սահմանափակ քանակությունների այլ ուղղություններով տեղափոխման ծրագրերը որոշակիորեն ներդաշնակվում են արևմտյան ուղղության հետ ՈԴ մրցակցությանը: Այս իմաստով, և այլ գործոնների զուգորդմամբ, ի տարբերություն արևմտյանի, Չինաստանի միջինասիական էներգոծրագրերի նկատմամբ Ռուսաստանը ցուցաբերում է որոշակի ընբռնողական և չհակադրվելու մոտեցում:

Ռուսաստանի և միջինասիական երկրների հետ կայուն, վստահելի և ներդաշնակ համագործակցության ու բարեկամական հարաբերությունների ձևավորման առումով ՉԺՀ գործադրած երկկողմ և բազմակողմ դիվանագիտական ջանքերը հանգեցել են հիմնարար նշանակության հաջողությունների, հատկապես տարածաշրջանի տնտեսական համագործակցության զարգացման, կայունության և անվտանգության ապահովման իմաստով: Միջին Ասիայից ՉԺՀ գնացող երկու խողովակաշարերը ռազմավարական նշանակություն ունեն Չինաստանի էներգոապահովման, ինչպես նաև Կասպյան շրջանում իրականացվող էներգոծրագրերի ողջ համալիրի առումով:

---

1. A Study of Energy Security-Chinese Academy of Social Sciences, February 2008. www.eu- china-energy-climate.net/Chinese%20.
2. Annual Energy Outlook 2008 With Projections to 2030, EIA-USA, June 2008. www.eia.doe.gov/oiaf/aeo/
3. BP Statistical Review of World Energy 2007.
4. Cherng-Shin Ouyang- Primary Energy Imbalance and China's Responses-CIER-2008.
5. Xu Xiaojie- Chinese NOG's Overseas Strategies:J. A. Baker Institute for Public Policy, 2007.
6. While paper: China's Energy Conditions and Policies. Inform. office of the State Council of the PRC, Dec. 2007 http://english.gov.cn/200712/26/content_844218_10.htm
7. Xuecheng Liu- China's Energy Security and Its Grand Strategy-The Stanley Foundation-2006
8. Li Xing, Hayk Martirosyan-The analyses of nationalism and Russian East Asia Resource Diplomatic Strategy- Russian Studies -East China Normal University-Shanghai-May 2007
9. Zhang Jianxin- Oil Security China's Foreign Policy- Shanghai Jiaotong Universiti-2006.
10. Susann Hunke-The Geopolitical of the Chinese-Kazakh Oil Pipeline-Clingendal International energy programme- August 2006
11. PetroChina Co. Limited- 00-PetroChina Co Ltd-TAGP Project.pdf-27 December 2007.
12. China's Thirst for Oil- International Crisis Group-Asia report- No153-June 2008.